

Կարծիք

Պաշտոնական ընդդիմախոսի

Հոիփսիմե Վահեի Թորոսյանի՝ «Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքներն արդի հայերենում և պարսկերենում (գուգադրական քննություն)»՝

Ժ. 02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ներկայացված ատենախոսության

Պաշտպանության ներկայացված ատենախոսությունը նվիրված է հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների գուգադրական քննությանը, որը կատարվել է նկարագրական, գուգադրական-համեմատական և տիպաբանական մեթոդներով:

Այս ուսումնասիրությունը, ըստ էության, առաջին փորձն է հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների գուգադրական քննության՝ իմաստային-թեմատիկ, կառուցվածքային և քերականական դաշտերում: Դարձվածքները հանդիսանում են յուրաքանչյուր լեզվի կարևորագույն շերտերից մեկը, որոնցում արտացոլվում են լեզվակիր հանրույթների աշխարհայացքային և լեզվամտածողության տարրերը: Հայերը և իրանցիները, ունենալով դարավոր համակեցության պատմություն, որոշակիորեն ազդվել են միմյանցից, մասնավորապես լեզվի ոլորտում. հայերենում առկա հարյուրավոր իրանական փոխառություններն այդ իրողության լավագույն վկաներն են: Եթե իրանական բառամթերքը հայերենում այս կամ այն կերպ ուսումնասիրված է, ապա շարահյուսության և, մանավանդ, դարձվածաբանության մակարդակում իրանական ազդեցությունը հայերենի վրա մինչ հիմա ուսումնասիրության առարկա չի դարձել: Ընդ որում հենց այստեղ է, որ առավել ցայտուն երևում է իրանական հետքը հայերենի

և հայոց լեզվամտածողության վրա: Դրա վառ օրինակները կարելի է գտնել դեռևս հայոց դպրության արշալույսին ի հայտ եկած երկերում: Այդ առումով, Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը», օրինակ, իրանական եզրաբանության և լեզվամտածողության խոսուն հետքերի հետաքրքիր գանձարան է:

Հռիփսիմե Վահեի Թորոսյանի աստենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից:

Ներածության, ինչպես նաև սեղմագրի մեջ հեղինակն անդրադառնում է հարցի պատմությանն ու անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների բնույթին, հիմնավորում աստենախոսության թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանությունը, կիրառական նշանակությունը, ինչպես նաև՝ օգտագործված գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների իմաստային-թեմատիկ խմբերն ու միջկապակցական իմաստներն արդի հայերենում և պարսկերենում», նվիրված է արդի հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների իմաստային-թեմատիկ խմբերին ու միջկապակցական իմաստներին:

Երկրորդ գլուխը՝ «Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների կառուցվածքային տիպերն արդի հայերենում և պարսկերենում», արդի հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների կառուցվածքային տիպերի քննությունն է ներկայացնում:

Երրորդ գլուխն՝ «Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների քերականական առանձնահատկություններն արդի հայերենում և պարսկերենում», անդրադառնում է անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների շարահյուսական և ձևաբանական առանձնատակություններին:

Եզրակացությունների մեջ ատենախոսը համապարփակ ամփոփել է ուսումնասիրության հիմնական արդյունքները՝ ատենախոսություններին ներկայացվող պահանջներին համահունչ:

Գրականության ցանկում ներկայացված են հետազոտության համար օգտագործված աղբյուրներն ու գիտական գործերը: Հարկ է նշել, սակայն, որ աշխատության աղբյուրագիտական հենքը՝ թեկուզ ներառում է ոչ մեծաքանակ հրապարակումներ, այնուհանդերձ այն հստակ արտահայտում է հեղինակի գիտական տեսլականը՝ ընդգրկելով համարյա բոլոր ռելեվանտ աղբյուրները:

Բնական է, ինչպես ամեն մի գործում, այստեղ էլ առկա են մի շարք թերություններ, որոնցից կարելի է նշել հետևյալները.

- Առանձին դարձվածաբանական տիպեր քննարկելիս հեղինակը չի անդրադարձել պատմական ասպեկտին. այն է՝ չի բերվում համապատասխան օրինակներ միջին իրանական լեզվադարաշրջանին պատկանող բնագրերից՝ միջին պարսկերենից, պահլավերենից և անգամ սողդերենից: Սա, ինչ խոսք, բացատրելի է, որովհետև աշխատանքի հիմնական ասպեկտը համաժամանակյա կտրվածքն է, որին ատենախոսը հստակ հետևել է: Այս նկատառումը ես կցանկանայի համարել ոչ թե թերություն, այլ, ավելի շուտ, հավելում՝ հետազայում ատենախոսությունը հրատարկման պատրաստելիս ի նկատի առնելու համար:
- Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը ներառեր պարսկահայոց գրականության մեջ պարսկերեն դարձվածքների թարգմանական ձևերը, և առհասարակ անդրադառնար պարսից լեզվամտածողության հայկականացման երևույթին:
- Ատենախոսության շարադրանքում առկա են որոշակի վրիպակներ, ոճական ձևակերպումներ, որոնք անձամբ հաղորդել եմ հեղինակին:

Նշենք, որ Հոփսիսիմե Թորոսյանի թեման արդիական է և արժեքավոր: Ներկայացված սեղմագիրը և տպագիր 7 հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության բովանդակությունը և հիմնական դրույթները:



Այն թույլ է տալիս միջնորդել ՀՀ ԳԱԱ Հրայրյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 019 մասնագիտական խորհրդի առջև Հոփսիսիմե Թորոսյանին բանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը (Ժ.02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ) շնորհելու հարցում:

Պաշտոնական ընդդիմախոս՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Հայ-ռուսական համալսարանի Արևելագիտության

ինստիտուտի տնօրեն



Պարոն Գ.Ս.Ասատրյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՀՌՀ գիտական քարտուղար,

բանասիրական գիտությունների թեկնածու



Ռ.Ս.Կասաբարովա

07.05.2022